

ՆՇՄԱՐՆԵՐ ԱՆԻ ԲԱՂԱՔԻ ԳՐԶՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹՅԱՆ

Մաշտոցի անվան Մատենադարանի № 6288 ձեռագիրը «Հաղբատի Ավետարան» է կոչվում Հաղբատի վանքում գրվելու պատճառով: Բանասիրությանը հայտնի է նաև որպես «Գեոտաշենի Ավետարան», Արցախի Գեոտաշեն գյուղի անունից, որտեղից 1920-ական թվականներին Գ. Հովսեփյանը բերում է էջմիածնի Մատենադարան և, շուտով, նրա մասին հրապարակում հմտալից մի ուսումնասիրություն «Հաղբատի դպրոցի մի դուխտորժոց («Գեոտաշենի Ավետարանը»)՝ վերաառություն: Հոգվածում առաջին անգամ ըստ արժանվույն գնահատվում է ձեռագիրը, որը ընդհանուր հանաչում է բերում և պատճառ դառնում նրան հաճախակի անդրադարձնալուն¹:

Ուսումնասիրության մեջ Գ. Հովսեփյանը մանրամասնորեն նկարագրում է ձեռագիրը, քննության ենթարկում գրչությունն ու հիշատակարանները և, մասնավորապես, ծանրանում ձեռագրի ստեղծման միջավայրի և մանրանկարչության վրա: «Հաղբատը մեկն է Հայոց ամենանշանավոր վանքերից և հոգևոր կենտրոններից, — գրում է նա, — ծագմամբ ունինք շատ ավելի հնագույն վանքեր, բայց քչերը դրանցից կատարել են այնպիսի երկարատև և կարևոր դեր, ինչպես Հաղբատն է: Նա նշանավոր է նաև իբրև ճարտարապետական արվեստի մի թանգարան...²: Նշանավոր է իբրև հոգևոր կենտրոն... որ ժԲ դարից կարեւոր դեր է կատարել մեր եկեղեցական պատմության մեջ... Բայց ոչ պակաս նշանավոր է նաև իբրև մատենագրության³ և գրչության արվեստի՝ գլխավոր կենտրոն Արևելյան Հայաստանի մեջ... Արևելյան Հայաստանի ժԲ դարի և ժԳ դարի առաջին կեսի նշանավոր հեղինակների մեծագույն մասը Հաղբատից են կամ Հաղբատի հետ կապված»⁴: Մշակութային այս կենտրոնում 1211 թվականին ավարտվել է Հաղբատի Ավետարանը: Գրիչը Հակոբն է, սրբագրիչը՝ կամ ուղղորդ՝ Մխիթար Քորայրեցին, նկարիչը Մարգարեն, իսկ կազմողը՝ Աբրահամը, որը կաղմել է «ի վանքս Հոռոմոսի, հրամանաւ հար Մխիթարայ»: Հաղբատի Ավետարանի ստացողն է «Սահակ կրանաւոր և յետին քահանան»,

1 Գ. Հովսեփյան, Հաղբատի դպրոցի մի դուխտորժոց («Գեոտաշենի Ավետարանը»), Նիսիեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության, պր. Ա. Երուսաղեմ, 1935, էջ 41—75:

2 «Հին հայկական մանրանկարչություն», Երևան, 1952, տախտակ 14—17: «Հայկական մանրանկարչություն», Երևան, 1967, էջ 204:

3 Ա. Դյուրնով, Краткая история Армянской живописи, Ереван, 1957, էջ 30—31; Л. А. Дурново, Краткая история Армянской живописи, М., 1979, էջ 240, նայե՛ք Очерки изобразительного искусства средневековой Армении, М., 1979, էջ 254—255: Վ. Մարեալյան, Նկարիչ Մարգարեի արվեստը, «Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 1, էջ 77—90:

4 Կ. Ղաֆադարյան, Սահակների և Հաղբատի վանքերը, «էջմիածին» 1968, № 6, էջ 6—20:

4 Ա. Մեղակիսյան, Սահակների և Հաղբատի մենաստանների մշակութային կյանքի պատմությունից, «էջմիածին» 1968, № 6, էջ 21—30:

5 Ա. Մարեալյան, Հաղբատի գրչության կենտրոնը, «էջմիածին», 1971, № 5, էջ 46—56:

6 Գ. Հովսեփյան, նշվ. աղբ., էջ 41, 68:

որ եղել է «աշակերտ սուրբ ուխտիս Հաղբատայ, աղգաւ ի տոհմիւ ի մեծ մայրաքաղաքէն յԱնուշ»: Չեռագիրը գրել է տվել ի հիշատակ ծնողներ՝ Ռիմանոսի և Կատայի, եղբայրներ՝ Իպատոսի և Առաքելի, քույրեր՝ Զարհայի և Հոռոմտիկնոց, նրանց զավակների, «և աղգայնոցն ամենից՝ կենդանեաց և մեռելոց», ապա՝ նվիրել Արջուառնի իրենց կառուցած եկեղեցուն:

«Ստացողի գլխավոր հիշատակարանից իմանում ենք, — գրում է Գ. Հովսեփյանը, — որ Ավետարանը նվիրված է Արջուառնի սուրբ ուխտին, որ շինված է հենց նվիրատուի և նրա հարազատների ծախքով... կարծում ենք այս ուխտի առաջնորդն է հայր Եղբայրիկը ... որովհետև Հաղբատի առաջնորդն էր «Տէր Յոհաննէս» իսկ Հոռոմոսինը՝ հայր Մխիթար, ուրեմն և Եղբայրիկը այս վանքերի հետ կապ չունենա՞ր:

Նկատենք, սակայն, որ Արջուառնի ուխտը չէ, որ շինել են նվիրատուները, այլ այդ ուխտում, որ արդեն գոյություն ունենա՞ր մի եկեղեցի, որին էլ նվիրել են Ավետարանը. «և առանձեպ սուրբ Աւետարանս յԱստուծոյ սուրբ եկեղեցիս, որ շինեցաւ ի մէնջ ի վանս Արջուառնի»⁷: Մանավանդ, որ ինքը Գ. Հովսեփյանը վկայակոչում է Ն. Մարգարյանին, որ Արջուառնի շինությունների վրա կարդացել է 1207 թվականի ոչ շինարարական, այլ հետազայի արձանագրություն⁸: Վիճելի է նաև հայր Եղբայրիկի Արջուառնի առաջնորդ լինելու հանգամանքը, ինչպես նաև Մարգարե նկարչի Հաղբատի միաբան լինելու և Հաղբատի Ավետարանը՝ Հաղբատում նկարագարողելու պարագաները:

Վկայակոչելով ձեռագրի գրությունից քառասուն տարի հետո 1255 թվականին Հակոբի և Մարգարեի կողմից Հաղբատում կանգնեցրած Սուրբ Սարգիս կոչված խաչքարը⁹, որը կառուցված է որպես բարեխոս իրենց և Մխիթար վարդապետ Քորայրեցու և հայր Բարսեղի, հեղինակը, առաջիններին նույնացնելով ձեռագրի գրչի և նկարչի հետ, եղբակցանում է, որ «ոչ միայն ձեռագիրն է Հաղբատում գրված, այլև նկարված է նույն տեղում և նույն ուխտի միաբանի կողմից»¹⁰: Այնուհետև Մարգարեն ոչ միայն դառնում է Հաղբատեցի, այլև հեղինակ Հաղբատի Ավետարանի բոլոր նկարների՝ խորանների, ավետարանիչների, երեսփոխանների, լուսանցադարձների և զարդագրերի: Իհարկե, Մարգարեն կարող էր լինել Հաղբատեցի և Հաղբատի Ավետարանի հետ կատարել այն ամենը, ինչ վերագրում են նրան, և նույնիսկ գրել, որովհետև ինչպես երեւիւմ է նրա գրած որոշ էջերից և հիշատակագրություններից, նաև հմուտ գրիչ էր, որ հավասարապես գրում էր և՛ երկաթագրով, և՛ գրչագրով և՛ քույրագրով:

7 Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 60—61:

8 Մատենադարան, ձեռ. № 6268, էջ 358 ր: Ընդգծումը մերն է. Ա. Մ.:

9 Ն. Մարգարյան, Տեղագրությունը ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 190. Հմմտ.

Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 121:

10 «Շնորհին Աստուծոյ ևս Յակոբ ևս Մարգարէս, յառաջնորդութեան տնտն Համադատայ կանգնեցաք զՍուրբ Սարգիսս բարեխոս մեզ ևս Մխիթար վարդապետի Քորայրեցու և հայր Բարսեղի և ննչեցից մերոց... ի թվիս 29 (1255)» (Ո. Ղաֆազարյան, Հաղբատ, Երևան, 1963, էջ 240—241): Կ. Ղաֆազարյանի կարծիքով, Մ. Սարգիս խաչքարը «կանգնեցվել է մի խումբ մարդկանց՝ Հակոբի, Մարգարեի, Մխիթար վարդապետ Քորայրեցու, հայր Բարսեղի և այլ ննչեցյալների հիշատակին»: Սակայն խաչքար կանգնեցնողները ննչեցյալ չէին, այլ ողջ էին և՛ Հակոբը և՛ Մարգարեն, ինչպես նաև Մխիթար վարդապետը և հայր Բարսեղը: Այնուհետև, այս արձանագրությունից չի երևում, որ Հակոբն ու Մարգարեն եղբայրներ են, ինչպես կարծում է

4. Ղաֆազարյանը (Անդ, էջ 280, 281):

11 Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 63:

Բայց այս ամենը նա կարող էր անել նաև Հաղբատից դուրս, ասենք Հոսոմոսի վանքում կամ Անիում:

Ճշմարտությունը բացահայտելու համար առավել մանրախույզ քննության պետք է ենթարկել ձեռագիրը, ուշադրության արժանացնելով ամեն մի թվացող մանրույթ, մանրանկարչությունն ուսումնասիրելիս շանտեսել դիրք, գրչութունն ուսումնասիրելիս՝ մանրանկարն ու կազմը, պահպանակն ու հիշատակարանը... որովհետև այս բոլորը միասին են ձեռագիր կոչվում, մի բարդ ու բազմակողմանի պատմական հուշարձան, ստեղծման որոշակի հանգամանքներով:

Ձեռագրի հետ կապված հարցերի ճիշտ լուծումից կշահի գրչության արվեստի ողջ բնագավառը, և հայ մշակույթի անցյալի պատմությունը: Այս առումով բավականին հետաքրքիր նյութ է տալիս Հաղբատի Ավետարանի հանգամանակից քննությունը, ճշգրտումներ մտցնում վերը շոշափվող համարյա բոլոր հարցերում և բավարարում առաջադրվող հարցադրումներին:

Հաղբատի Ավետարանն այսօր $29,5 \times 22,5$ սմ մեծության 360 մագաղաթյա ղեղնավուն թերթերից կազմված ձեռագիր է, գրված երկաթագրով՝ $19,5 \times 6,3$ սմ մեծության 19 տողանոց երկու սյունակներում: 1—5 թերթերը պահպանակներ են, նույնաչափ, նույնագիր Ավետարանի մասեր: 6—15 թերթերի հանդիպակաց էջերում, մեկընդմեջ նկարված են համաքարբառի խորաններ¹², իսկ հաջորդ՝ 16 և 17 թերթերի հանդիպակաց էջերում՝ «Մուտք յնրուսողէմ» տերունական նկարն է և «Ընծայականը»՝ Քրիստոսը ստացող Սահակ և Առաքել եղբայրների հետ: 18-րդ թերթից սկսվում են չորս Ավետարանները՝ ավետարանիչների և ավետարանառաջների նկարներով¹³, ընդ որում, բոլոր ավետարանիչների նկարները կաշվեթելով կարված են համապատասխան ավետարանառաջներին (Ավետարանների սկզբնաթերթերին), որոնց պատճառով այդ ութ թերթանի պրակները դարձել են ինն թերթանի¹⁴: Ձեռագրի մեջ խախտումներ և փոփոխություններ են կատարվել դեռ այն չափարոված:

Մաթևոսի Ավետարանի սկիզբը կրել է Բ. պրականիշը, ուրեմն սկզբի խորանները զբաղեցնող տասը թերթերը կազմել են Ս. պրակը: Ինչպես համարյա բոլոր պրակները, Բ պրակը ևս ունեցել է 8 թերթ, որոնցից առաջինը կտրված և փոխարինված է երկու թերթերով, ընդ որում ավելացված թերթի ա էջը

¹² 6բ—7ա խորաններում եփսեփոսի նամակը, 8բ—9ա, 10բ—11ա, 12բ—13ա, 14բ—15ա խորաններում տեղավորված են կանոնները:

¹³ Համապատասխանաբար՝ Մաթևոս ավետարանիչի և ավետարանառաջի նկարները՝ 18բ—19ա, Մարկոսինը՝ 112բ—113ա, Լուկասինը՝ 174բ—175ա, Հովհաննեսինը՝ 268բ—269բ (ընդ որում երկուսն էլ զանվում են երկրորդ) էջերում:

¹⁴ Բացառությամբ Մ. (29-րդ)—9, (Մարկոսի Ավետարանի ավարտին մնում էր մի էջ. գրիչը պրակի 8-ին ավելացրել է մի թերթ և այդ էջը լրացրել, որպեսզի հաջորդ Ավետարանը սկսվի նոր պրակով) 9-(24-րդ)-7 և Ը-(40-րդ)-12 թերթանի պրակներին: Այժմ այն խախտված է: Ձեռագրի կազմը հետազայի է: 1211 թվականից հետո, պահպանվել է ևս երեք անգամ կազմվելու հիշատակարաններ, 1325 թ. Տեր Վանականը կազմել է տալիս Ստեփանոս կազմիչի ձեռքով (Շգոթի հնացեալ և աւերնալս, 351բ), 1388 թ. Մովսէս ցահանան նորագում և կազմել է տալիս Սարգիս կազմարարին (112ա), իսկ 1497 թ. պարոն Ուլուխաթունը նորոգել է տալիս, որովհետև «յոյժ հնացեալ էր սուրբ Աւետարանս» (173բ): Սրանցից մեկի ծամանակ շիւթիւ են Զ և Ռ պրակների տեղը, և զխաւօր հիշատակարանի զույգ թերթերի միջև են տեղավորել 1223 թ. հիշատակարանը:

նկարագարդ ավետարանառաջն է (19ա), մյուս էջը և երկրորդ թերթի երկու էջերը (19բ, 20ա,բ) բնագիրը, գրված համեմատաբար մեծ երկաթագրով (նկ. 1): Հաջորդ Դ թերթից (21ա) մինչև Ժ պրակի վերջը (21բ, նկ. 2) գրված է նախորդի համեմատությամբ մի քիչ փոքր, դեղեցիկ երկաթագրով: Այդ հատվածի գրիչը, որի անունը չի պահպանվել, զարգագիր չի օգտագործել, ոչ էլ նրանց համար տեղ թողել: Զուգի նաև լուսանցազարդեր: Ընթերցվածների գրչության գրերը չեն պահպանվում սովորական հատվածների գլխագրերից: Կետադրական միայն մի նշան է օգտագործում, որը գրվում է տողի վերևում, տառի վերին մասին հավասար, հազվադեպ նկատվում է ստորակետը: Նախորդ վրա փոքր գծիկ է դնում: Լուսանցքներում համարաբար դեղեցիկ, մանր գրչազիր է: Պրականիշերը գրված են ստորին լուսանցքի աջ կողմում: Այս գրչի ձևերով գրված են Բ-Ժ պրակները:

Ն պրակից (22ա, նկ. 2) մինչև ձեռագրի վերջը գրել է Հակովբ գրիչը, ինչպես հիշում է ինքը՝ Մարկոսի վերջում՝ «Յակովբ գրիչ յիշեցէք ի Տէր»¹⁵ և հավաստում գլխավոր հիշատակարանը. «Ի սուրբ ուխտս Հաղբատու դժագրեցաւ ձեռամբ Յակովբայ...»¹⁶:


Ձեռագրի գլխավոր հիշատակարանում հիշված բոլոր անձնավորությունները հայտնի են. դրանք են ստացող Սահակը, իր ծնողները, եղբայրները, բույրերը: Հիշվում է ուխտի առաջնորդ Հովհաննեսը, վերջում՝ կաղմող Արրահամն ու նկարիչ Մարգարեն: Սահակը հիշում է նաև օգնարգիս հոգևոր ծնադն իմ, զՅակովբոսն և զՎարդն: Քանի որ Սահակը իր մասին գրում է «որ էի աշակերտ սուրբ ուխտիս Հաղբատայ... սնեալ ի սրբարան ուխտիս ի Հաղբատ», նշանակում է նրա հոգևոր հայր Մարգիսը իր ուսուցիչն էր Հաղբատում և այնտեղի միաբաններից էր: Ուրեմն նրա հետ միասին հիշվող Հակովբոսն ու Վարդը նույնպես Հաղբատի միաբաններից են, կամ նրա դասընկերները, կամ մարդիկ, որոնք մասնակցել են ձեռագրի գրությանը: Մենք հակված ենք նրանց հիշատակվելու առիթը երկրորդ պարագայի մեջ տեսնելու, այսինքն՝ ձեռագրի պատրաստմանը մասնակցելու մեջ, մանավանդ որ նրանք երկուսով միասին հիշվում են նաև Մարգարեի նկարչի կողմից, որը երբևէ չի հիշում ոչ Հաղբատի առաջնորդ Հովհաննեսին, ոչ էլ Սահակի ուսուցիչ Մարգսին: Բայց Մարգարեն հիշում է նախ Վարդին, հետո Հակոբոսին՝ Սահակի բոլոր հարազատներին հիշելուց հետո, երկրորդ սյունակում, առանձին՝ «նա[և] զՎարդան և զՅակովբոսն և զծնողսն նոցա և զամենայն քնտանիսն»: «Յակովբոսը» ամենայն հավանականությամբ Հակոբ գրիչն է. եթե այս ճիշտ լինի, Վարդը առաջին գրիչը պետք է լինի: Սահակը առաջինը հիշում է Հակոբ գրչին, որն ավարտել է Ավետարանը, իսկ Մարգարեն պահում է ձեռագիրը գրելու հերթականությունը և նախ հիշում է Վարդին, ապա՝ Հակոբին:

Հակոբը ձեռագիրը շարունակել է գրել նույն մեծության երկաթագրով, բայց պակաս կանոնավոր ու գեղեցիկ: Ընթերցվածներն սկսում է զարգագրել, ապա մեկ կամ երկու տող կարմիր տառերով, ոսկեպատելու համար: Զարգագրերի մոտ ունի լուսանցազարդեր՝ շաբաթների ու օրերի նշումով: Մաթևոսի Ավետարանի սկզբից ավելացրած երկու թերթերի վրա տեղավորված տառերի քանակը համեմատեցի՞նք առաջին գրչի մի թերթի վրա գրված տառե-

¹⁵ Մատենագարան, ձեռ. № 6288, էջ 173բ:

¹⁶ Նույն տեղում, էջ 359ա:

րի բանակի հետ, պարզվեց, որ նրանք համապար են: Նշանակում է Մաթևոսի Ավետարանի առաջին թերթի երկու երեսն էլ լրիվ գրադված են եղել բնագրով, և որ այն գլխադարձ չի ունեցել, այլ միայն սովորական գրությամբ՝ «Աւետարան ըստ Մաթէոսի» խորագիրը:




Նկ. 3. (էջ 5ա)

Գեղարվեստական զարդարվածության բացակայությունը պատճառ է դառնում, որ Մահակը առաջին գրչից վերջնի ձեռագիրը և հանձնի մի այլ գրչի, որը գրելու հետ նաև պետք է ծաղկեր, այսպես գրչին փոխելը իմաստ չունի, եթե նա չէր վախճանվել կամ դժբախտության չէր հանդիպել: Ինչպես կհամոզվենք քիչ հետո, երկրորդը՝ Հակոբ գրիչը, իսկապես նաև ծաղկող էր: Գրչության պատմության մեջ այսպիսի դեպքեր շատ են եղել: Երբ գրիչը կամ ծաղկողը չէր բավարարում ստացողի պահանջները, նրանց փոխում էին: Բավարարվենք մի օրինակով: Ստացող Վարդան քահանան գրում է, որ Կիպրոսում «հանդիպեցա՛յ քահանայի միոյ և ետու գրել Աւետարան: Եւ ոչ հաւանեաց լիսն անվարձ գրելոյն և նիւթոյն թանձրութեան և ծաղկին անպատեհութեան»:

Վերադառնում է Կիլիկիա, լսում է համբավավոր Թորոս Հոռմկլայեցի գրչի մասին, որ բնակվում էր Գերմաղբյուրում: «Եւ յոյժ աղաչեցի զնա յանձն առնուլ և գրել զնոր Կտակարանքն ... և նա յանձն էառ» — գրում է նա¹⁷:

Այստեղ նույնպես առաջին գրիչը չի բավարարել ստացողի պահանջները, և նա նոր գրիչ է քնտրել, որի առավելությունը ծաղկել է արտղանալն էր:



Նկ. 4 (էջ 114ա)

Ձեռագրի և պրակը, որի ութ թերթերից չորսը Մաթևոսի և չորսը՝ Մարկոսի ավետարաններից է, վերջինիս կիսախորանով, դարձյալ այլ գրութչամբ է գրված: Սույն թերթերի գրչության և կիսախորանի համեմատությունը Մաթևոսի սկզբի երկու թերթի հետ, ինչպես նաև պահպանված հիշատակարանը ցույց են տալիս, որ այս բոլոր 10 թերթերը Մարգարեի ձեռքի գործն է:

Մարգարեի գրած և պրակի և ձեռագրի սկզբում տեղադրված հինգ թերթ պրակների համեմատությունից պարզվեց, որ վերջիններս ունեն նշված

¹⁷ Մատենադարան, ձեռ. № 154, էջ 298ա:

պրակի հինգ թերթերի բովանդակությունը, համապատասխան են յուրաքանչյուր թերթի սկսվածքն ու ավարտը. տառանիշների չափն ու քանակը, նույնիսկ լուսանցազարդերի ձևն ու մեծությունը: Պահպանականների գրությունն և լուսանցազարդերի ու զարդագրերի համեմատությունը ձեռագրի Հակոբ գրչի գրած թերթերի գրությունն, չգունավորած լուսանցազարդերի և զարդագրերի հետ, մեզ այն համոզման բերեց, որ, նախ՝ պահպանականների գրիչը Հակոբն է, և որ այդ պահպանականները մասն են եղել Հաղբատի Ավետարանի, գտնվել են նրա մեջ այն տեղում, որտեղ այժմ Մարգարեի գրած թերթերն են գետնեղված¹⁵, և ապա՝ որ Հակոբ գրիչը նաև ծաղկող է, որի անառարկելի ապացույցն են այդ պահպանականների չորս տարբեր ընթերցվածների սկզբի զարդագրերն ու լուսանցազարդերը¹⁶ (չորս ընթերցվածներից մեկը զարդագիր չունի, մյուսը՝ լուսանցազարդ), որոնք գունազարդված չեն: Ի դեպ գունազարդված չեն նաև Ավետարանի բնագրում մի շարք զարդագրեր²⁰:

Այս ցույց է տալիս, որ Հակոբ գրիչը նկարել է զարդագրեր և լուսանցազարդերը, բայց չի ներկել: Հետագայում Մարգարե ծաղկողը ներկել է, և այդ ընթացքում, տեղ-տեղ խախտել է Հակոբի գծագրությունը և նրանց սահմաններում գծել նոր լուսանցազարդեր, որոնց մաս նրկում է Հակոբի գծագրության մնացորդները, հատկապես օրերի շրջանակները²¹: Մարգարեն նկարել է նաև նոր լուսանցազարդեր և զարդագրեր, ինչպես իր ավելացրած թերթերի վրա, այնպես էլ այլ տեղերում, որոնք բոլորովին չեն տարբերվում մյուս զարդագրերից և լուսանցազարդերից:

Մրանցից բացի Հակոբ գրիչը նկարել է Մարկոսի, Ղուկասի և Հովհաննեսի ավետարանառաջները, որոնցից վերջին երկուսը պահպանվել են և, ի տարբերություն լուսանցազարդերի և զարդագրերի, գունավորված են:

¹⁵ Ահա Հակոբի գրած պահպանականների և Մարգարեի գրած համապատասխան թերթերի սկսվածքներն ու վերջավորությունները (բերում ենք բնագրի հաջորդականությամբ, քանի որ պահպանականները ետ և առաջ են դրված)։

Պահպանական (Հակոբ)

Բնագիր (Մարգարե)

Յա եւ վաղժադակի ընթացաւ...

108ա (Մաթևոս)

Յք Փարսեաց ի վիմի...

108բ

(նկ. 5,6)

Յա եղեն իբրեւ զմեռեալս...

110ա (Մաթևոս)

Յբ եւ ել համբաւ եւ...

110բ

Յա նորաւ եւ մկրտեցի զՅեզ...

114ա (Մարկոս) (նկ. 3,4)

Յբ եւ զնոսա ի նախն...

114բ

1ա Մինչ կաղմէին զուռկանս...

115ա (Մարկոս)

1բ եւ եթող զնա տենդն...

115ա

4ա ..զն եւ պաշտէր զնոսա...

116ա (Մարկոս)

4բ Քարոզել յոյժ...

116բ


Հակոբի գրածից բացակայում են 109, 111 և 113 թերթերը. վերջինս 111ա էջը Մարկոսի ավետարանառաջն է եղել՝ նկարված Հակոբի ձեռքով:

¹⁶ Առաջինը Մաթևոսի Ավետարանի Յեթ Թվից սկսվող «Եւ իբրեւ երեկո եղև» ընթերցվածն է (էջ 3բ), որտեղ կարմիրով զարդարված է «Եւ»-ն և մի տող կարմիրով երկաթադրած՝ ոսկեպատկու համարի Հաղորդ երեքը Մարկոսի Ավետարանից են. առաջինը ունի զլուսագիր «Եւ», կարմիրով երկու տող և լուսանցազարդ՝ օրերի նշումով (էջ 5ա), երկրորդը զարդագծված «Եւ», երկու տող, լուսանցազարդ, օրը (Գ-1ա) և երկրորդը՝ «Եւ», մի տող կարմիրով լուսանցազարդ, օրը (Գ-4ա):

²⁰ Մատենադարան, ձեռ. № 6288, էջ 164ա (Ա), 238ա(Ե), 311ա(Ա), 333ա (Զ) և այլն:

²¹ Նույն տեղում, էջ 215ա, 255ա և այլն:

Հակոբ գրիչը յուրովի մտածելով է ունեցել առաջին գրչի (Բ-Ժ պրակ) կատարած աշխատանքին: Քե ինչ է նա արել գլխազարդ և զարդագիր լուսնեցող առաջին էջի հետ շենք կարող ասել, որովհետև նրանք փոխել է Մարգարեի գրիչը, բայց մյուս էջերը ներդաշնակել է Ավետարանի իր գրած մասի հետ, օժտելով նոր զարդագրերով և լուսանցազարդերով:



Նկ. 5 (էջ 3 ր)

Սկզբում որոշել է ընթերցվածների գլխազարդերը դարձնել զարդագիր, մաքրել է դրանք և տեղը զարդագիր հարմարեցրել: Այդպես են 21ա, 22ա, 24ա էջերի զարդագրերը (նկ. 7): Բայց որովհետև այս ձևն առաջին չէր, ջնջումների և կրկին նկարելու պատճառով, այլ եղանակ է գործադրում, մզացնում է ընթերցվածի գլխազարդը և ոսկում առաջին տողը (27ա, նկ. 8): Այս ևս չի բավարարում Հակոբ գրչին (թե՛ ստացողին), նա որոշում է ընթերցվածների դիմաց լուսանցքներում նկարել միայն լուսանցազարդ: Այդպես էլ արվում է: 28բ-ից մինչև 89ա էջերի ընթերցվածների դիմաց, լուսանցքներում Հակոբը նկարում է երեսունինն լուսանցազարդ, առանց զարդագրերի:

Հակոբ գրիչը նկարել է նաև խորանները և գրել համարաբարառը, որովհետև կողքի լուսանցքներում թվերը և ստորին լուսանցքներում համարաբարառները գրված են, ուրեմն նրանք գրված պետք է լինեն նաև խորանների մեջ, որոնք սովորաբար գրվում են միասին և նույն գրությունը: Ամենայն հավանականությամբ խորանները գծված են եղել միայն կարմիրով, ինչպես զարդագրերն ու լուսանցազարդերը (այդ բանը մեզ հուշում են պահպանակները), որոնք էլ պատճառ են դարձել նրանց նորերով փոխարինելուն: Պատճառ չունենք կասկածելու ձեռագրում խորանների առկայության վրա, որովհետև այդ դարում առանց նրանց գոյության ձեռագրի կազմելու մասին խոսք անգամ լինել չէր կարող: Մանավանդ, որ այն բերել էին Հոռոմոսի վանք կազմելու համար: Այսպիսով, Հակոբը ձեռագիրն ավարտել էր, այսինքն՝ գրել էր բնագիրը, գծել էր լուսանցազարդերը, զարդագրերը, խորանները, իսկ կիսախորանները նաև ներկել էր: Ձեռագիրը սրբագրել էր Մխիթար Քոռայրեցին:

Այս բանը հաստատում է նաև հիշատակարանի վկայությունը. «Ի սուրբ ուխտս Հաղբատայ գծագրեցաւ ձեռամբ Յակովբայ»²²:

Ուրեմն Ավետարանն ավարտվում է Հաղբատում և ապա նոր միայն տարվում Հոռոմոսի վանք՝ կազմելու:

«Անիին կից վանքերից Հոռոմոսի վանքն է, որ ամենից ավելի դեր է կատարել մանրանկարչության և գրչության արվեստների կողմից...»: Այդ ժամանակ այստեղ աշխատում էր նշանավոր գրիչ և նկարիչ Իգնատիոսը²³: Բայց Ավետարանը Հաղբատից Հոռոմոս էին տանում ոչ Իգնատիոսի, այլ հռչակավոր կազմող Աբրահամի մոտ: Մինչ այդ Աբրահամը ի թիվս այլ ձեռագրերի, կազմել էր նաև Հոռոմոսի վանքի համար Իգնատիոսի գրած Ավետարանը՝ ոսկի կազմով²⁴: Հաղբատի Ավետարանը Հոռոմոսում անմիջապես չի կազմվում, այլ մինչև կազմվելը անցնում է Մարգարե գրչի և նկարչի ձեռքը, որը, մեր կարծիքով, կատարվել է Աբրահամ կազմողի խորհրդով: Հռչականուն կազմարարը, քստ երևույթին, չի կամեցել այդքան աղքատ զարդարված ձեռագիրը շքեղ կազմել և առաջարկել է օգտվել իր հանաչած և մոտակա վանքում գտնվող Մարգարեի շնորհներից: Մահակը լսել է փորձված կազմողի խորհուրդը, իսկ Մարգարեն սիրով հանձն է առել կատարելու Աբրահամ կազմողի ցանկությունը, և նույնիսկ նրան նկարել է ձեռագրի լուսանցքներից մեկում:

Սակայն մինչև Հաղբատի Ավետարանի հետ Մարգարեի կատարած դործողություններին ծանոթանալը, փորձենք գտնել այն ուխտը, որտեղ աշխատել է նկարիչը:


Ո՛ր Հաղբատի Ավետարանի գլխավոր հիշատակարանում, ո՛ր էլ Մարգարեի հիշատակագրություններում ակնարկ չկա նրա Հաղբատում գտնվելու մասին, իսկ ձեռագրի քննությունը ցույց տվեց, որ նա չէր կարող Հաղբատում լինել

²² Մատենադարն, ձեռ. № 6288, էջ 358բ:

²³ Հանձին որի «ունենք մի կարող մանրանկարիչ Հոռոմոսի և Անիի շրջանից, որ պետք է իր արժանավոր տեղը գրավի Արևելյան Հայաստանի մանրանկարչության պատմության մեջ»: Գ. Հովսեփյան, *նշվ. աշխ.*, էջ 15—28, «Իգնատիոս մանրանկարիչ և Շոթոռեանց տոհմը»:

²⁴ 1214 թվականին Հովուց թառում Իգնատիոսի գրած և նկարազարդած Ավետարանի վերջում, որն այժմ պահվում է Վենետիկի Մխիթարյան մատենադարանում, այսպիսի մի մակագրություն կա. «Հոռոմոսի վանացն ոսկեռուփ Ավետարանն և այս՝ մին գրչի է գրած»: Բ. Մարգարյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, Հ.Ա. Վենետիկ, 1914, էջ 594: Հմմտ. Կ. Ա. Մարեալյան, Գրիչ և նկարիչ Իգնատիոս Հոռոմոսցի, «Բանբեր Համալսարանի», Երևան, 1982, № 1:


Հնաագրի հետ փոփոխություններ կատարելու ժամանակ: Նախ այդ դեպքում ևս պրակը չէին անջատի, իսկ եթե անջատեին՝ նորից Հակոբին կտային ընդօրինակելու կամ Հակոբն ինքը կլրացներ իր իսկ վրիպած հատվածը՝ 42-րդ պրակում: Գ. Հովսեփյանի Ս. Սարգիս խաչքարի արձանագրության փաստարկը, համոզիչ չէ: Սարգարեն միշտ էլ կարող էր խաչքար կանգնեցնել Հաղբատում, նույնիսկ այնտեղ շապրելով, ինչպես մինչև 1211 թվականը, այնպես էլ նրանից հետո, քառասունչորս տարիներից ցանկացած տարվա ցանկացած օրը:



Նկ. 6 (էջ 108բ)

Հաղբատի Ավետարանի Կանոնների երկրորդ խորանի արտաքին լուսանցքի ստորին և միջին գերանների վրա ամբողջ հասակով կանգած են երկու վեղարավորներ: Վերևի վեղարավորը, որը կանգնած է միջին գերանի վրա, հազած է մինչև ոտները հասնող կապույտ կապա, իսկ վրայից՝ շերտավոր փիլոն: Աջ ձեռքին ունի պարզ հովվական դալադան, ձախ ձեռքում թաշկինակով բռնել է կարմիր և պարզ կազմով Ավետարանը: Լուսանցքում կողքից զբո-

ված է. «Հայ եղբայրիկ առաջնորդ սուրբ ուխտիս, յիշեսցիր»²⁵: Ստորին գերանի վրա կանգնած վեղարավորը, համարյա հագած է աշնպես, ինչպես հայր եղբայրիկը, միայն գավազանի փոխարեն ունի երկարակոթ խաշ՝ աջ ձեռքում, իսկ ձախում, նախորդի նման, դարձյալ թաշկինակով բռնած, կարմիր կազմով Ավետարան: Լուսանցքում կողքից գրված գրության սկզբի մասը աչսօր շատ



Նկ. 7 (էջ 22ա)

դժվար է կարդացվում, իսկ կես դար առաջ Գ. Հովսեփյանը կարդացել է. «Կազմիչ սորին եւ հայր...ի սմին յիշեսցիր»²⁶: Վերջին բառերից առաջ կարդացվում է, եւ շորս տառ «ջորդ» որանդ, ամենայն հավանականությամբ, մոռացվել է ջ-ից հետո եկող «ն» տառը «ջնորդ» օրը «միջնորդ» բառի վերջին կեսն է: Գլխավոր հիշատակարանից մենք պիտենք, որ ձեռագրի կազմիչը Արրահամն է: Անընթեռնելի մասում որոշակի նկատվում են այդ անվան մի բանի տառեր. հատկապես «հ»-ն: Երբ համադրում ենք հիշյալ երկու վեղա-

²⁵ Մատենադարան, ձեռ. № 6288, էջ 9ա:

²⁶ Գ. Հովսեփյան, Նշվ. աշխ., էջ 48:

րափորների նկարների մոտ եղած մակագրությունները. ստացվում է այսպես:

վերևում «Հայր Եղբայրիկ առաջնորդ սր ուխտիս յիշեսչիք».

ներքևում՝ «Կաղմիշ սորին եւ հայր [Արքահամ մի]ջնորդ ի ամին յիշեսչիք»:

Ձեռագրում երկրորդ մակագրությունը ավելի երկար տեղ է դրադեցնում, քան առաջինը, և ավելի խիտ է գրված:

Ուրեմն հայր Արքահամը ոչ միայն Հաղբատի Ավետարանի կաղմիշն է, ինչպես հավաստում է գլխավոր հիշատակարանը, այլև Մարգարեի գործի միջնորդը, ինչպես վկայում է նկարի մակագրությունը:

Հայր Եղբայրիկին Գ. Հովսեփյանը համարում է Արշուառնի առաջնորդ: Փաստ չունենք: Հաղբատի Ավետարանը Մարգարեի նկարազարդելուց, Արքահամի կաղմելուց և Արշուառնի վանքին նվիրելուց հետո միայն գրվել է գլխավոր հիշատակարանը, ուր երկու անգամ հիշվում է Արշուառնը, «...Վասն զի խնդիր էաւ սրբութիւնդ ձեր մատուցանել մաղթանս ողբենծ պաղատանաւք, ով լուսնեամբ բնակիչք սրբոյ ուխտիդ Արշուառնի, առ որ զյոյս հաւատոյ մեր եղնալ զբովանդակ զոյք ծնողաց մերոց և եղբարց ծախեցաք և շինեցաք զաստուածարնակ սուրբ եկեղեցիս, և աւանդեցաք զսուրբ Աւետարանս յԱստուծոյ սուրբ եկեղեցիս, որ շինեցաւ ի մէնչ ի վանս Արշուառնի»²⁷: Միաբաններից ոչ մեկին չեն հիշել հիշատակարանում: Բայց եթե առաջնորդը լինէր Եղբայրիկը՝ կհիշեին: Արքահամին նկարել էին և հիշատակարանում հիշել, կհիշեին նաև Արշուառնի առաջնորդին: Այդպիսին, հավանաբար, չկար:

Ձեռագրում հիշվում են գրչության վաղը Հաղբատի առաջնորդ Հովհաննէսը, կաղմելու վաղը Հոռոմոսի առաջնորդ Մխիթարը, մնում է ձեռագրի ծաղկելու ուխտի առաջնորդը, որը և պետք է լինէր հայր Եղբայրիկը: Մարգարեն, որ նկարել էր ձեռագրի կաղմող և գործի միջնորդ հայր Արքահամին, իր սեփական ուխտի առաջնորդին, որտեղ ինքը ծաղկել էր ձեռագիրը, չնկարել չէր կարող: Եվ նա նկարել է իր ուխտի առաջնորդ հայ Եղբայրիկին:

Փնտրենք հայր Եղբայրիկի ուխտը:


Մաշտոցի անվան Մատենադարանի № 5554 ձեռագիրը Ավետարան է: Համառոտ նկարագրությունը. «ԺԲ դար: Զարեհանի ուխտ: Կաղմող՝ Վանական (ԺԲ դ.): Ստացող՝ Գրիգոր: Թերթ՝ 278: Մագաղաթ, 25×18: Երկօյուն: Բոլորգիր: Տող՝ 20: Մանրանկար՝ խորան՝ 9, կիսախորան, լուսանցադարձ: Կաղմ՝ կաշեպատ տախտակ՝ զրոշմազարդ...»²⁸: Ձեռագիրը գլխավոր հիշատակարան չունի: Գիրք սովորական բոլորգիր չէ. ավելի շուտ գրչագիր՝ բոլորգրախառն: Թվագրելի է ԺԲ դարի վերջ և ԺԳ դարի սկիզբ:

Գրչից երկու հիշատակագրություն կա. Մաթևոսի Ավետարանի վերջում. «Այս կտակ աստուածախաւս սուրբ ուխտին է. Զարեհանի, Տէր Աստուած ողորմեսցի ստացողին, ամէն»²⁹, և գլխավոր հիշատակարանի սկզբի «Փառք»-ը: Որպես սրա շարունակություն, անմիջապես, ստացող-նվիրատուի հիշատակարանն է՝ այլ գրություններ. «Գրիգոր ստացող սուրբ Աւետարանիս և ամուսին րանն է՝ այլ գրությամբ. «Գրիգոր ստացող սուրբ Աւետարանիս և ամուսին րանն, և որդիս նոցին յիշեսչիք ի Քրիստոս: Ընդ նոսին և զԱմէնն կրաւ[նա]-

²⁷ Մատենադարան, ձեռ. № 5223, էջ 350ա:

²⁸ «Ցուցակ ձեռագրող Մաշտոցի անվան Մատենադարանի», հ. Բ, կաղմեցին Օ. Եղանյան, Կ. Չեչիճյան, Փ. Անթուրյան, Երևան, 1970, էջ 132:

²⁹ Մատենադարան, ձեռ. № 5554, էջ 35ա:



Նկ. 8 (էջ 27ա)

ւոր պատճառ դործոյս, և դառաջնորդը սուրբ ուխտիս Զար<Ե> և հանի զճղխէ հայր, և զՎարդան փակակալ, և զնաչալտուր դործակից, զՍտեփաննոս և զՂուկաս, զՎարդա միայնաւոր, և զայլ համարէն միարանք Սուրբ Նշանիս, որում սուրբ Աւետարանս է խաչի և ընծայ աւանդեալ ի վերագրելոցս»³⁰։ Այնուհետեւ նվիրող Գրիգորի շղագիր ընծայականն է³¹։

Այսպիսով, այս ձեռագիրը գրված է ոչ թէ Զարեհանի Սուրբ Նշան նւխում, ինչպէս նշված է Յուդակում, այլ նվիրված է նրան որպէս «խաչի և ընծայ»։

Զարեհանը պոնովում է Արշարունիբում և շփոթվել է Զարեհափանի հետ³²։

³⁰ Նույն տեղում, էջ 27ճա։

³¹ Նույն տեղում։

³² «Հայ ժողովրդի պատմություն», հ. 3, Երևան, 1976, էջ 98։ Մուկափեա լեռնապարի, այժմյան Հայկական պարի հյուսիսային փեշերին էր փոխւմ Զարեհափան զովաոր համանուն ափանով (հին հայկական Զարեհափան քաղաքի տեղում) (ընդգծումը իմն է—Ա. Մ.)։ Զարեհափանը Մաղկոան զովաորում է, Սմբատ Զարեհափանցու ծննդավայրը, և կրում է Արտաշէսի Զա-

Զարեհանը գտնվում է Կաղզվանից Արարաի հոսանքն ի վեր քսանհինգ կիլոմետր հեռավորության վրա: Իրա տեղում այժմ Զարաբխանա գյուղն է³³:

Իսկ որտեղ էր գրված և նկարազարդված Զարեհանի սուրբ Նշան ուխտի Ավետարանը:

Ձեռագրի վերը բերված հիշատակարաններից բացի բազմաթիվ հիշատակագրություններ կան խորանների գերանների, սյուների վրա և նույնիսկ գլխադարձերի վարդյակներում, որոնց մեջ մեզ ամենից առաջ հետաքրքրում է «Եղբայրիկ» անունը:

Եվսերիոսի նամակի առաջին խորանի ստորին գերանի վրա գրված հիշատակագրությունից (որը շարունակվում էր նաև հաջորդ խորանի համապատասխան գերանի վրա) պահպանվել է միայն առաջին բառը՝ «Եղբայրիկն»³⁴:

Տր էջում խորանի գլխադարձի վարդյակում ութաթև դարդի մեջ, շուրջանակի գրված է ներկով «Եղբա[յրիկ]», իսկ միջին գերանի վրա, դարձյալ ներկով՝ «Եղբայրիկ զհայր Բեխենց վանից յիշեցէք յաղաթս»³⁵ (նկ. 9): Կարծես գտանք հայր Եղբայրիկի ուխտը: Այդ Բեխենց վանքն է: Ուրեմն հայր Եղբայրիկը Բեխենց վանքի առաջնորդն է, և ոչ Աբջուառնի: Զարեհանի վանքը՝ Բեխենց անունը չունի, այն կրում էր Սուրբ Նշան անունը և նրա հայրը կամ առաջնորդը Եղիսեն էր: Ուրեմն նրանք տարբեր վանքեր են: Փնտրենք Բեխենց վանքը:

Անի քաղաքի արձանագրություններից երկուսում հանդիպում ենք «Բեխենց» տեղանվանը: Առաջինը Աբղարիսի Պահլավունու եկեղեցու վրա Արուճեցի Տրդատ քահանայի Ոեթ (1193) թվականին դրած արձանագրության մեջ է, և արտի անունն է «եւ տուն եկեղեցւոյն դիմաց, մեծ արտ Բեխենցն: Ճ Կապճո մին ի միքեան ի շոողսն Բեխենցն այս է ի Պղպղիկ»³⁶: Մյուսը՝ Տիգրան Հոսենցի Անիի նորակառույց Սուրբ Գրիգոր Լուսավորչի վանքի վրա է, արձանագրված ՈԿԴ (1215) թվականին: Կառուցելով իր հռչակապատճարը, Տիգրան Հոսենցը վանքն ապահովում է ամեն ինչով, ապա պատվիրում «եւ զվանքն Բեխենց կոչեցեալ, զոր ես շինեցի և նորոգեցի, ընծայաւք փարթամացուցի ամէնովն, Սուրբ Գրիգորոյ վանացս հոգացողս հոգայ զորպիսութիւն»³⁷: Բեխենց

բն հորդու անունը: Այդ անունից է ծագում նաև Զարիշատ և Զարեհան անունները, որոնք պետք է պահպանվեն նույնությամբ: Զարեհանը հիշվում է VI դարից, հետագայում այն դառել է Զարաբխան:

33 Ղ. Այվազյան, Արարատ, Վենետիկ, 1961, էջ 41, 517: Հմմտ. Գ. Ս. Հակոբյան, Ներքին Բաւնի ազգագրությունը և բանահյուսությունը, Երևան, 1974, էջ 15:

34 Մատենադարան, ձեռ. № 5554, էջ 1բ—2ա:

35 Նույն տեղում, էջ 8բ: Ահա և մյուս հիշատակագրությունները:

4ա Միջին գերանի վրա հունարեն ծածկագիր, առայժմ անվերծանելի:

4ա Աջ սյան վրա, վերից վար Տիրացու [գրի]:

6ա Խորանի գլխադարձի վարդյակի մեջ «Սիմեոն Բն»:

Ստորին գերանի վրա. [«Յիշեալգի վերաթին հորագեց Ամսարան[ս] ի ձե[ն]ն Տ[ի]-րաց[ուի]»:

7ա ստորին գերանի վրա, գաղտնագրությամբ. «Զմիակեցն զՍիմեոն, որ բնակէր յանաղատի, յաղաւթս յիշեցէք, ամէն»:

8բ Ստորին գերանի վրա. [եա]չ[այ]տաւ եղբայր մեր յիշեցէք ի սուրբ յաղաւթս ձեր, [աղ]աչեմ»:

36 «Գրվան հայ վիմագրության», սրակ Ա, Անի քաղաք. կազմեց Հ. Թրբելի, Երևան, 1966, էջ 47, № 134:

37 Նույն տեղում, էջ 63, № 188:

վանքը Քորամանյանի վկայութեամբ Տիգրան Հոնեցի Սուրբ Գրիգոր Լուսավորչի վանքի մոտ էր³⁸։

Ուրեմն Տիգրան Հոնեց մեծահարուստ Անեցին, մինչև Սուրբ Գրիգոր տաճարի կառուցումը Անիում ուներ Բեխենց վանքը (Հափանաբար Բեխենց տոհմի տերիտորիայում, որտեղից էլ՝ անունը), իսկ Ս. Գրիգորի կառուցելուց հետո նորոգել և փարթամացրել էր այն։ Ահա այս Բեխենց վանքի առաջնորդն էր Նղրայրիկը։ Արձանագրութեաններում ևս հանդիպում ենք Տիգրան Հոնեցի Նղրայրիկ անունով սպասավորին։ «Ի ՈԶԱ. (1222) ԹԻՆ, շնորհին Քրիստոսի, ի տէրութեանս աստուածատէր Աթաբակ Իանէի և Շահնշահի և Աւագին, ևս Նղրայրիկս, ծառայ տեառն իմոյ Տիգրանա, նորին ողորմութեամբն շինեցի զարձանս յիշատակ մեզ և ծնողաց և զաւակաց մերոց»³⁹։ Ամենայն Հափանա-կանութեամբ սա նույն հայր Նղրայրիկն է, որ իր ծառայութեանների համար իր տիրոջից արժանացել է քաղաքի պարիսպն քուրդերից մեկը հիշատակ-արձան շինելու պատվին։

Ինչևէ, 1215 թվականից առաջ, այսինքն 1211 թվականին, հայր Նղրայրիկը Տիգրան Հոնեցի Բեխենց վանքի առաջնորդն էր, որտեղ Մարգարե ծաղկողը նկարագարում է Հաղրատի Ավետարանը։ Ուրեմն Մարգարե ծաղկողը այդ ժամանակ արդէն Անեցի էր։ «Մարգարե նկարչի Ավետարանը,—գրում է Գ. Հովսեփյանը,—Անեցի Սահակ կրօնավորի պատվերով քնդհանրացած ձևերից (շարուն) զատ, իր մի քանի անհատական, կենցաղական մանրանկարներով, ժամանակակից Անի քաղաքացու, հոգևորականի, բարձր և ցածրին խափերի երկու սեռի ներկայացուցիչների տարազներով, հայ արվեստի և մշակույթի պատմության համար թանկագին աջժեռ է բերում»⁴⁰։

Բեխենց վանքը գտնվում էր Ախուրյանի ափին, Անիի հյուսիս-արևելյան կողմում, որտեղից հաճախարհն անցնում էր դեպի Հոռոմոս, և նրանք կապված էին իրար հետ։ Ք. Քորամանյանի վկայությամբ, Անի քաղաքն հասնում էր մինչև Հոռոմոս⁴¹, այսինքն՝ Հոռոմոսը և Բեխենց վանքը մի քաղաքում էին գտնվում։

Փորձենք ավելի սրտշակի դարձնել քաղաքում Բեխենց վանքի տեղը⁴²։ Անի քաղաքի հատակագծում ն. Մառը նշել է հայտնի և նոր հայտնաբերված շենքերը և առանձին կետեր՝ պարիսպներ, աշտարակներ, դարպասներ, դռներ և այլն։ Հ. Օրբելին Անիի ավերակների Ուղեցույցի վերջում կցել է ն. Մառի կաղմած փերը նշված հատակագիծը և բերել այնտեղ նշված կետերի համարներին համապատասխան անունները⁴³։ Ք. Քորամանյանի ուսումնասիրության մեջ մեզ հետաքրքրող տեղեկությունների մեջ հիշատակված շենքերն ու առանձին կետերը հատակագծում կրում են հետևյալ համարները (բերում ենք

38 Ք. Քորամանյան, նյութեր հայկական հարստարազնություն պատմության, Առաջին ժողովածու, Երևան, 1942, էջ 219։


39 «Գիվան հայ վիճադրության», Ա, էջ 7, № 20։

40 Գ. Հովսեփյան, Խաղրակեանք կամ Պոռնիանը Հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969, էջ 12։

41 Ք. Քորամանյան, նշվ. աշխ., Առաջին ժողովածու, էջ 327—328։

42 Н. Я. Марр, Ани, 1934, էջ 56—57-ում՝ ներդիրներ։

43 Н. Орбели, Путеводитель по городу Ани, У. Գեաղարքուրգ, 1910, էջ I—VI, հատակագիծ։



Նկ. 9, (էջ 8ր)

հուշարձանը և համարը). Ախուրջանի կամուրջը՝ 9, Սարգիս Ծիլենցի դուռը՝ XIII, որը եղել է Բագրատ արքայունու դարպասը: Այս դարպասի արևմտյան՝ 67 և արևելյան՝ 69 բուրգերը: Տիգրան Հոնենցի կառուցած Կուսանաց վանքը՝ 92, նրա դուռը՝ XI և դարպասը՝ XII: Տիգրան Հոնենցի 1215 թ. կառուցած Գրիգոր Լուսավորչի տաճարը՝ 82: Վերջինիս և Կուսանաց վանքի մեջտեղում ընկած բարձունքը՝ ավերակով՝ 90:

Ճանապարհները նշանակված են գծիկներով, բարձունքները և դեռի ափերը՝ աղեղնաձև գծախմբերով:

Այժմ Թորոս Թորամանյանի առաջնորդությամբ հետևենք Մառի հատակագծին. Ախուրյան գետի «կամուրջեն(9) քաղաք բարձրանալու ճանապարհը ոլորապատույտ կբարձրանա (սկսելով կամուրջեն դալով դեպի արևելք) կհասնի մինչև Ծիլենց Սարգսի դուռը (XIII), որը կգտնվի Բեխենց վանքին արևմուտք... Այս ճանապարհը կհասնի մինչև Բեխենց վանքի բարձրությունը (90), պետք է ասել, որ գետափի ճանապարհն ալ ոլորապատույտով կապված է այս ճանապարհի հետ»:

Հիրավի, կամուրջից դուրս եկող ճանապարհը հասնում է Ծիլենց Սարգսի դուռը, և շարունակվում դեպի արևելք, բարձունքը, որի վրա գտնվում են Բեխենց վանքի ավերակները (նկ. 10):

Ծիլենց դռնից՝ գետեզերքով դեպի արևելք, հինգ հարյուր մետրի վրա է գտնվում Կուսանաց վանքը, որից նույնքան մետրի վրա՝ դեպի Հյուսիս-արևելք՝ Բեխենց վանքը: Սրանից ութ հարյուր մետր դեպի արևելք Գրիգոր Լուսավորչի վանքն է, երեքն էլ Տիգրան Հոնենցի կառույցները: Վերջինիս դիմաց, պարսպի վրա՝ Նդրաշրիկ բուրգն է⁴⁴:

Ի դեմս Բեխենց վանքի մեզ հայտնի է դառնում Անի մայրաքաղաքի գրչության և մանրանկարչության մի կենտրոն, Անիի նշանավոր մեծատուն Տիգրան Հոնենցի իշխանության և հովանավորության և հայր Նդրաշրիկի առաջնորդության ներքո:

Հայաստանի քաղաքական, անտեսական և մշակութային կենտրոն Անին, ուր ծաղկում էին արհեստներն ու արվեստները, չէր կարող գրչության արվեստանոց չունենալ: 1199 թ. Զաքարյանները ազատագրում են Անին և առավել դարգանալու հնարավորություն ստեղծում: Քաղաքում կային բազմաթիվ արհեստավորական շարքեր, արտադրական և առևտրական հաստատություններ: Աճող քաղաքի շուրջ առաջացել էին արվարձաններ: Հյուսիսային ուղղությամբ պարսպից քաղաքը ձգվում էր մեկուկես կիլոմետր, արևելքից, փոքր-ինչ ընդհատումներով, հասնում էր մինչև Հոռոմոսի վանքը...

Անին արհեստագործության, երկրագործական արտադրանքի վերամշակման և առևտրի խոշոր կենտրոն էր: Բարգավաճ և բարեկեցիկ քաղաքի «բնակչությունն աչքի էր ընկնում ազատաբարո կենցաղով, աշխարհիկ բարքերով՝ հակված դեպի թաաերական խաղերը, երգն ու պարը, հանդեսները, երաժշտությունն ու արվեստը:


Քաղաքի վերնախավը սիրում էր շքեղությունը, արծաթն ու ոսկին, ցուպ ու զեխ կյանքը:

Իր դարգացած արհեստագործության բազմաթիվ ճյուղերով... առատ շուկաներով... զգալի չափով զրազեա արվեստասեր բնակչությամբ Անին ապրում էր ծաղկուն քաղաքային կյանքի եռուզեռով...»⁴⁵:

Ահա այս Անիում, բուն քաղաքում և ծայրամասերում, Հոռոմոսի վանքում և աչուր, ծաղկում է նաև գրչության և մանրանկարչության արվեստը և տևում մինչև մոնղոլների արշավանքները: Այնտեղ ձևագրեր էին գրում և վաճառում,

⁴⁴ Բեխենց վանքը Գրիգոր Լուսավորչի վանքից և Ծիլենց դռնից հավասար հեռավորության վրա է ընկած և վեցհարյուր մետրի վրա է Ախուրյան գետից, որտեղից «Շիրանիկը ձուկն էր բերում» Բեխենց վանք:

⁴⁵ «Հայ ժողովրդի պատմություն», հ. 3, Երևան, 1976, էջ 571—572:



24 10 Անի բաղարի զբոսի և ժանրանկարչության

պատվերներ ստանում ու կատարում: Գրչուխյան արվեստի հետ կապված առարկաներ արտադրում, օնփական արտադրանքի կամ դրսից բերված նյութեր վաճառում և այլն: XII դարի վերջերին Սաղմոսավանքում գրված մի ձեռագրի կազմի համար հիշվում է «Զեղբայրն մեր Քառսունքն... որ զնիթ կազմութեան սորա երեք ի Տփխեաց և զաղն և կոճակ՝ յԱնոյ»⁴⁶:

Տիգրան Հոնեցի Բեխենց վանքից մեզ հասած Մատենադարանի № 5554 ձեռագիրը ապացուցում է վերը ասվածը: Զեռագրի հիշատակարանը չի գրվել, որպեսզի այն վաճառելուց հետո շարադրվի՝ կատարված գործարքի համապատասխան: Բազմաթիվ հիշատակագրությունների, ինչպես նաև ձեռագրի վիճակի քննությունից պարզվում է, որ ձեռագիրը գրվել և ավարտվել է առանց համարարրանների գունազարդման, միայն գծանկարով: Գունազարդված են միայն շորս կիսախորանները:

Բեխենց վանքի ձեռագրի խորանները գունազարդվում են վաճառելիս, պայմանավորվածության համաձայն, որի մեջ մեծ դեր էին կատարում միջնորդները: Զարեհանի Ավետարանում Սիմեոնը հիշվում է որպես «պատճառ գործոյս» այսինքն՝ միջնորդ, իսկ խաչատուրը՝ նրան գործակից (որոնց անունները գրված են խորանների գերանների վրա) այնպես, ինչպես Աբրահամը՝ Մարգարեի համար: Սյունիքից մեկի վրա կարդացվում է «Տիրացու գրիչ» անունը⁴⁷, մի ուրիշի վրա «...զի վերստին նորոգեց Աւետարան[ս] ի ձեռն Տիրացուի» (մաշված է): Նույն խորանի վերևում, վարդյակի մեջ գրված է. «Սիմէոն քահանա»: Մեզ թվում է հիշատակարանը պետք է կարդալ «Սիմէոն քահանա [յիշեա] զի վերստին նորոգեց Աւետարան[ս] ի ձեռն Տիրացուի»: Սիմեոնը, գործի միջնորդը, պահանջել է գունազարդումը (անշուշտ՝ զնի համապատասխան հավելումով) և Տիրացուն կատարել է այն: Զեռագիրը առանց կազմելու տարվում է Զարեհան, որտեղ և կազմում է դրսից եկած վանական կազմարարը⁴⁸:

Մեր կարծիքով նույնպիսի նպատակով և սկզբունքներով է գրված նաև Մատենադարանի № 7635 ձեռագիր Ավետարանը: Մազադաթյա այս ձեռագրի միայն կիսախորաններն են գունազարդված: Համարարրանի խորանները կարմիրով են գծված, որոնց վերջինի գերանի վրա գրված է. «Զմեղապարտ և զանարժան գրիչ Սոսթէնէս յիշեսցիք ի Տէր»⁴⁹: Հիշատակարան չի գրված, չնայած բավականին տեղ կա վերջում: Այդ վիճակում էլ այն անցնում է Ավետեացի ձեռքը, որը ձեռագիրը նվիրում է Հռոմոսի վանքին⁵⁰:

Այս և Բեխենց վանքում գրված ձեռագրի կիսախորանները ունեն որոշ նշմանություն, բայց Բեխենց վանքի Ավետարանում արտակարգ ցույտուն է արտահայտված լուսանցազարդերի՝ ավանդական ձևերից շեղումը (նկ. 12): Այստեղ լուսանցազարդերի մեծ մասը եռատերև ծաղիկներ են, շատերը ծաղկա-

⁴⁶ Մատենադարան, ձեռ. № 5727, էջ 192բ:

⁴⁷ Մատենադարան, ձեռ. № 5554, էջ 6ա:


⁴⁸ «Յիշեսցիք և զվանական կազմող» (2ա) գրված է խորանի գերանից ներքև Նույն գրով (2բ) «Յիշեա Քրիստոս Աստուած զբնակիչք սուրբ ուխտիս Զարեհանի, որ հանգուցին զկեանս իմ՝ ի զանութեամբ» (ձեռ. № 5554):

⁴⁹ Մատենադարան, ձեռ. № 7635, էջ 6բ:

⁵⁰ «Աւետարանս Հռոմոսի վանից Սուրբ Յովանիսի է աւանդեալ ի մեղապարտ ծերոյս յԱւետեացս, որդոյ խաչեղբորն. աշտլէ յիշիլ բազումս ի ՈՂԸ (1249) թվին], Ով զմեզ լիշէ բարի մտաք, ինքն յիշեալ եղիցի յԱստուծոյ և յամենայն սրբոց, ամէն»:

մաններում, իսկ մի մասն էլ ազատ հյուղերով: Զեռագրերում հանդիպում ենք Հաղրատի Ավետարանում նկարված Շերանիկի ձկանը, առանց Շերանիկի (Նկ. 11):

Լուսանցադարձերի ծաղիկների բնականության այս ողին եղել է Բեխենց վանքի մանրանկարչական դպրոցի գերիշխող ողին, որը առավել ցայտունությամբ դրսևորվել է Հաղրատի Ավետարանում, Բեխենց վանքի գրչության կենտ-



Նկ. 11 (էջ 27 դա)

րոնի մի այլ արվեստագետի, գրիչ և նկարիչ Մարգարեի ստեղծագործություններում:

Այժմ տեսնենք թե ո՞վ էր Մարգարեն և ինչ է արել Բեխենց վանքի գրչության կենտրոնում Հաղրատի Ավետարանի հետ:

Մատենադարանի № 1886 պատառիկը մազազաթյա երկաթագիր Ավետարանի վերջին թերթն է, որի առաջին սյունակում վերջանում է Հովհաննու Ավետարանը, իսկ երկրորդում սկսվում և հաջորդ էջի վերջում ավարտվում է հիշատակարանը: Այն գրված է 1209 թ. Հովասափ կրոնատորի անունից, որ էր «ազ-

դաւ եւ տոհմիւ ի մեծ գեաղաքադարէն Կումիրոյ»⁵¹ և առաջացած տարիքում իր «արդար ընչից», որպէս «փրկանք հոգւոյ» ազատում է գերողներից Ավետարանը, և քանի որ «էր կարի զեղծեալ» տալիս է «դարձեալ նշանադրել ծաղկով եւ արծաթով փառադարդեալ», որը կատարվում է Հառիճում: Հիշատակարանը գրում է կազմող Մարգարեն, որը, ամենայն հավանականությամբ, նաև ծաղկով նշանագրողն էր, որի տակ հասկացվում է լուսանցադարդեր նկարելը: Բանն այն է, որ ձեռագիրը գրված է եղել XI դարում կամ դրանից առաջ և նշանագրերը նշվել են բաժանարար գծիկով, իսկ XI դարի երկրորդ կեսից արդեն օգտագործվում էին զարդագիրն ու լուսանցադարդը: Այդ թերին լրացնել է օվել Հովասափը Մարգարեին, որը նաև կազմել է և արծաթով փառադարդել, վերջում էլ հիշատակարանը գրել: Հիշատակարանի գրությունը համեմատեցինք Հաղբատի Ավետարանի Մարգարեի գրչագիր հիշատակագրությունների հետ. նույնությունը ակնհայտ է:



Նկ. 12 (էջ 146բ)

Ուրեմն Մարգարե արվեստավորը՝ գրիչը, ծաղկողը, կազմողը 1209 թ. Հառիճում էր, 1211, թ.Անիում: Թերևս սույն Ավետարանի ծաղկելու և արծաթով փառադարդելու համբավն է Կումիրիից. (Կումայրիից) հասել Հոռոմոս ու Բե-

⁵¹ Համեմատելի՝ Հաղբատի Ավետարանի հիշատակարանի շարժառ և տոհմի ի մեծ մայրաքաղաքէն յԱնույ...» հետ:

խենց վանք, որի միաբանն է դարձել Մարգարեն: Եվ Անի քաղաքային կյանքը, կենցաղը և ճարտարապետությունը այնպիսի ուժեղ տպավորություն են թողել Հառիճեցու վրա, որ նա նրանցից դրվագներ է մարմանավորել Ավետարանի համարարրառի խորանների գերանների վրա և «Մուտք լերուսաղէմ» տերտ: նական նկարում⁵²:

Առաջին անգամ Հաղբատի Ավետարանում ենք տեսնում հիշատակագրություններ ու մակագրություններ Համարարրառի խորանների կամարների, սյուների և գերանների վրա, և Բեխենց վանքում գրված մյուս՝ Զարեհանի Ավետարանում՝ նաև վարդյակների մեջ: Այս գալիս է անշուշտ Անիի եկեղեցիներ, պալատների, պարիսպների, աշտարակների, դարպասների, հուշարձանների կամարների վրա գրված արձանագրությունների նմանողությունից, և նրանց տպավորության առակ է Մարգարեն գրել: Տեղին է այս առիթով հիշել անգլիացի նշանավոր նկարիչ և հնագետ Ռոբերտ Կեր Փոլտրի տպավորությունը Անիից, որ ստացել է 1817 թ. այնտեղ կատարած այցելության ժամանակ, «Տները, եկեղեցիները, աշտարակները, պարիսպները, ամեն մեկ շենքը, ցածր կամ բարձր, ունի ընդհանուր ճաշակ և բոլորի վրա տեսնում ենք սև քարի մեջ քանդակված սուրբ նշանը (խաչը—Ա.Մ.): Բացի այս նշաններից, ես գտա հին հայկական տառերով փորագրված երկար արձանագրություններ, եկեղեցիների զլխավոր մուտքերի վրա»⁵³:

Այս ամենը տեսել է Մարգարեն: Եվ նրա ձեռքում Հաղբատում նկարադարձված Ավետարանը կերպարանափոխվում է, վերաշնչավորվում:

Հաղբատի Ավետարանի սկզբից անշատաժ խորանների փոխարեն Մարգարեն նկարել է տաս խորաններ՝ հանդիպակաժ էջերի վրա, մեկընդմեջ: Առաջին երկու խորանները, որոնք տարբերվում են մյուսներից, պարունակում են եմփսեթիոսի նամակը՝ Կարպիանոսին: Դրանցից յուրաքանչյուրը իրար կցված երեք կիսաշրջանակներ են, որոնք շրջափակված են քառանկյունիով: Սրանց միջի ստարածությունը ծածկված է կանաչ և կարմիր աղյուսանման դարդերով, որոնք իրարից բաժանվում են ոսկեգծերով: Քառանկյունին շրջանակված է ավելի մեծ քառանկյունի եզերադարձով, որի մոտիվներն են եռատերևի և հնգատերևի իրար հաջորդող շաբլոնները⁵⁴:

Հաջորդ խորաններում արդեն գրված են կանոնները: Խորաններն ունեն երեքական սյուներ, որոնց և ստորին և միջին գերանների զլուխները դուրս են գալիս դեպի արտաքին լուսանցքները:

Առաջին խորանի միջին գերանի վրա կանգած է մի պատանի, անմորուս, երկար մազերով, զլխին երկարավուն զլխարկ և հագին երկար պարեզոտ: Զախ ձեռքում ունի դարդարուն սրբիչ, աչով բռնել է մի կանթով ջրաման:

Ստորին լուսանցքում նույնպիսի մի պատանի, աչ ձեռքով ուսին է դրել մի կեռազլուխ մահակ, որի կեռից մի ձուկ է կախված: Դլխի մոտ գրված է.

⁵² Կ. Ա. Մաքսույան, Անի-Հռոմոս ճանապարհին գտնվող կամարը, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1982, № 1, էջ 143—149:

⁵³ Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. 2, ԺԹ դ., Երևան, 1934, էջ 747: Այնուհետև նա գրում է. «Նրանից (եկեղեցիների զլխավոր մուտքերի վրա) եղած արձանագրություններից Ա. Մ.) մի քանիսը ես պիտի ընդօրինակեի թղթի վրա, և մեծ օրը առաջացած չիներ և այնքան ցուրտ չլիներ, որ կարողանայի բռնել մատիտը» (անգլ):

⁵⁴ Մատենադարան, ձեռ. № 6288, էջ 6բ—7ա:

«Շերանիկ քանի դաս ձուկն բեր»⁵⁵:

Հանդիպակաց խորանը արդեն մեկ ծանոթ է: Միջին գերանի վրա կանգնած է Բերենց վանքի առաջնորդ Հայր Եղբայրիկը, իսկ ստորին գերանի վրա միջնորդ և ձեռագրի կազմող Հայր Արքաճամբ⁵⁶:

Դժվար չէ նկատել, որ Մարգարեն այստեղ նկարել է ձեռագրի հետ կապարած իր աշխատանքային միջավայրի ներկայացուցիչներին: Ուխտի առաջնորդին և կազմարարին՝ ձեռագիրը ձեռքերում և ուխտի սպասավորների ներկայացուցիչներին. նրանց հաց և ջուր, թե գինի տվող պատանիներին: Վերջին խորանի վերջն գերանի վրա—մի նռնենի է նկարված՝ վրան թռչուն: Մտնի տակ ծուպավոր գորգի և դարդարուն բարձի վրա նստած պատանին սաղ է նվագում⁵⁷: Ուրեմն առաջին պատանու ձեռքի անոթը ոչ թե ջրաման է, այլ Անիում պատրաստած գինու սափոր:

Մարգարեն այս խորանների գերանների վրա բազմաթիվ հիշատակագրություններ ունի սրոնցում հիշվում են ստացողը, ծնողները, եղբայրները⁵⁸: Հայր Եղբայրիկի, Հայր Արքաճամբի և Շերանիկի մասին վկայությունները լուսանցքներում են գրված, իսկ վերջին խորանի գերանի ներքևում Մարգարեն թողնում է իր մասին առաջին հիշատակագրությունը. «Տէր Աստուած ողորմեա Մարգարէին՝ գրչի և նկարչի եւ Սահակայ ստացողի և ծնողաց իւրեանց, ամէն»⁵⁹: Մարգարեի գիրը՝ խորաններից գուրս, լուսանցքներում և համարաբառներում գրչագիր է, իսկ գերանների վրա տարբեր գույնի ներկով գրված՝ երկաթագիր:

Խորաններից հետո, հաջորդ թերթի երկրորդ էջով մեկ նկարել է հռչակավոր «Մուտք լծրուսաղէմ» նկարը, կատարված «ոչ շարլոնական ձևակերպությամբ, այլ ինքնուրույն ստեղծագործությամբ»⁶⁰: Հաջորդ «Ընծայականը», խմբանկարի կենտրոնում կանգած է Քրիստոսը, իսկ կողքերից Ավետարանն ընծայաբերող Սահակ Անեցին և իր եղբայր Առաքելը: Այստեղ ավարտվում է Մարգարեի կողմից ձեռագրի սկզբում գրված տասներկու թերթերի նկարազարդումը:

Նրա հաջորդ գործը Մաթևոսի Ավետարանի առաջին թերթի անջատումն է, որ ինչպես նշել ենք, գրված էր առաջին գրչի կողմից, և նրա փոխարեն երկու թերթերի մուծումը, որոնցից առաջինի վրա նկարում է կիսախորանը՝ գլխադարձով, դարձագրով, լուսանցազարդ և դարձագիր տողերով: Հաջորդ երեք էջի վրա, խոշոր երկաթագրով տեղավորում է անջատված թերթի պարունակած բնագիրը:

Մարգարեին չի բավարարում նաև Մարկոսի ավետարանառաջը, և քանի որ այն գտնվում էր մի պրակի մեջտեղում, որի շորս թերթի վրա Մաթևոսի Ավետարանի վերջին մասն էր գրված, իսկ մյուս շորսին՝ Մարկոսի սկիզբը,

55 Մատենադարան, ձեռ. № 6288, էջ 8բ:

56 Նույն տեղում, էջ 9ա:

57 Նույն տեղում, էջ 15ա:

58 Նույն տեղում, էջ 10բ:

«Քրիստոս Աստուած ողորմեա Առաքելին, ամէն»:

«Տէր Աստուած գթայ ի հոգի Ռիմանոսին ծառայի քո, ամէն»:

«Հոգի սուրբ Աստուած, գթայ ի հոգին Իպատոսի ծառայի քո, ամէն»:

11ա «Տէր Յիսուս ողորմեա Սահակայ, ամէն»:

59 Մատենադարան, ձեռ. № 6288, էջ 15ա:

60 Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 50:

անշատում է ամբողջ պրակը և նորից գրում ու նկարազարդում է: Եթե Մաթև-
փոսի Ավետարանի սկզբում իր ավելացրած թերթերի վրա բնագիրը գրում էր
ավելի լայն տողերի վրա և համեմատաբար մեծ երկաթագրով, ազատ էջամաս
շմնալու համար, ապա այստեղ պահպանում է տողերի տառանիշերի չափն ու
քանակը. նույնիսկ լուսանցադարձերի ձևն ու մեծությունը: Անշատված թերթե-
րից հինգը տեղադրվում է ձեռագրի սկզբում որպես պահպանակ, իսկ երեքը,
հավանաբար վերջում՝ որպես պահպանակ, վերջինները այժմ չկան: Մաթևոսի
Ավետարանը վերջանում է 111 ա էջում: Հաջորդ ազատ մնացած էջը օգտագոր-
ծում է հիշատակարանի համար⁶¹:

Խորանների մեջ համարարբառների, խորանների գերանների վրա և լու-
սանցքներում՝ հիշատակագրությունների, լրացված թերթերի վրա բնագրային
գրությունները, որ Մարգարեն կատարել է մանր և մեծ, ուլիղ և թեք գրչագրով,
գեղեցիկ երկաթագրով և բոլորադրով, ցույց են Տալիս, որ Մարգարե արեղան
ոչ միայն վարպետ նկարիչ է, այլև վարժ և հմուտ գրիչ, ինչպես իրեն համա-
րում է մի հիշատակագրության մեջ⁶²:

Մարգարեն այնուհետև գունադարձում է զարդագրերն ու լուսանցադար-
ձերը, որոնք միայն գծված էին և անգույն էին: Նրա լրացրած պրակի լուսան-
ցադարձերը ամբողջովին պատկանում են իրեն: Ինչպես ասացինք, դրանք
գծելիս նկարիչը պահպանել է Հակոբի նկարած լուսանցադարձերի չափը և ձևը:
Մարգարեի և Հակոբի լուսանցադարձերի համեմատությունը ցույց է տալիս,
որ նա ոչ միայն գունադարձել է անգույն զարդերը, այլև տեղ-տեղ միջամտել է
Հակոբի նկարազարդածներին, պահպանելու համար ձեռագրի զարդարվածու-
թյան միօրինակությունն ու ներդաշնակությունը: Մարգարեն մանրանկարչա-
կան սրբագրություններ է կատարում ձեռագրում, երբեմն-երբեմն գլխագրերի
վրա ավելացնելով մի տերև կամ մի այլ դարձ:

Մարգարեի վերջին գործը Հաղբատի Ավետարանի հետ, Հովհաննեսի Ավե-
տարանից Հակոբ գրչի վրիպած հատվածի լրացումն է: Նա ձեռագրի մեջ ավե-
լացնում է մի թերթ և վրան գրում ՃԻԹ հատվածից մի քանի տուն («Այդ յոր-
ժամ ծնիցի զմանուկն» բառերից մինչև «զուրախութիւնն»)⁶³:

Այս բոլորից հետո Հաղբատի Ավետարանը տարվում է Հոռոմոսի վանք,
որտեղ Աբրահամը կազմում է ձեռագիրը և հանձնում տիրոջը:

Ձեռագրի հիշատակարանը կարող էր գրվել այստեղ, կազմելուց առաջ,
որովհետև կազմելուց հետո գծվար է լինում գրելը: Բայց որովհետև այն գրե-
վել է ոչ երկաթագիր, ոչ էլ գրչագիր գրությամբ, որ ավելի գծվար է, այլ ավե-
լի գլուրագիծ, շղագրին մոտեցող գրությամբ, ենթադրում ենք, որ այն գրվել է
կազմելուց հետո, Անիում, կամ հենց Արշուառձում, որտեղ դրվել է ձեռագիրը,
բայց ոչ Մարգարեի ձեռքով, ոչ էլ Աբրահամի, այլ Հովհաննեսի ձեռքով.
«...և զողորմութիւն խնդրող զՅովհաննէս յիշեսչիք յաղաթս վասն Տեառն, աղա-
չեմ»⁶⁴ ավարտում է հիշատակագիրը:

61 «Սուրբ Առաքեալ և Բարձրաբանիչ Բանին հաւր, ի բոյժ ապաւինեալ բարեխաւսութիւն
աղբատս և մեղաւոր արեղայս Մարգարէս՝ նկարող սորին, որպէսզի ողորմեացիս ինձ, նաև Աս-
տուկայ ստացողի և եղբար իւրում Իսաատին, որ կիսաւրեա ել յաշխարհ: Եւ մեզ աղաթիւք
յիշէ, Աստուած զինքն յիշէ» (էջ 111բ):

62 «Տեք Աստուած ողորմեա Մարգարէին՝ Գրչի և նկարչի...» (էջ 15ա):

63 Մատենադարան, ձեռ. № 6288, թերթ 338:

64 Մատենադարան, ձեռ. № 6288, թերթ 360բ:

Զորս ավետարանիչների նկարները Հաղբատի Ավետարան են մուծվում կազմելուց հետո, որովհետև կաշվե բարակ թելերով կարված են համապատասխան ավետարանառաջներին:

Զեռագիրը Արշուառճի վանքում մի տասնամյակ է մնում: 1223 թ. Ավետարանը Անիի գավառում վաճառվում և տարվում է Արցախ:

Այն ամենը, ինչ բացահայտվեց սույն հոդվածում, ավելի որոշակի են դարձնում Հաղբատի Ավետարանի տեղը հայ ձեռագրական մշակույթի մեջ, որպես շատ արժեքավոր մի հուշարձանի՝ իր գրիչներով, նկարիչներով ու կազմողով, գրչության այն դպրոցներով, որոնցում ստեղծվել է: Իսկ նկարիչ Մարգարեն ամուր կանգնում է մայրաքաղաքում, որպես Անիի մեղ հայտնի առաջին խոշոր մանրանկարիչը, որը Անիի հուշարձանների, որմնանկարների ու քաղաքային աշխարհիկ կյանքի կենսախինդ միջավայրը մարմնավորել է ավետարանական խորաններում և նկարներում:

Գ. Հովսեփյանի կարծիքը նրա մասին ավելի շոշափելի հող է ստանում. «Մարգարեի արվեստի առավելությունն է և գնահատելի կողմը, — գրում է նա, — որ նա չի հեռանում մեքենական կերպով միայն սովորական, բնդունված ձևերին, այլ ստեղծագործում է ուրույն, անհատական և կենցաղական գծերով և արտահայտություններով, և դրանով բարձրացնում յուր նկարների զեղարվեստականի հետ և պատմական-աղագրական մեծ արժեքը: Բայց նույնիսկ բնդահանուր հետեւողություն և բնույթ կրող մանրանկարների մեջ ... արտացոլում են նկարչի անհատական կարողությունն ու շնորհքը: ... Զույգ բերող Շերանիկի, անանուն սպասավորի, ինչպես և երկու վանականների պատկերները, գաղափար է տալիս մեղ ժամանակակից հասարակ դասակարգի երիտասարդ քաղաքացու և վանականների զգեստավորության մասին, աշուղի նկարով՝ տարազի հետ սաղի, փովածքի կամ կապերտի, բանաստեղծական մտայնության մասին, անկախ ավանդությունից, յուր ազատ կամքով: ...

Բայց ամենից ավելի ուշագրավը Հիսուսի մուտքն է նրուսաղեմ, որ ամենին չի նմանվում ավանդական պատկերացումներին, այլ ամբողջապես նկարիչի մի նոր հղացումն է անկախ ձևակերպությամբ... Հիսուսի բնդունելությունը նկարիչը տվել է տեղական կենցաղական բնույթ, նմանեցնելով մի բարձրաստիճան անձի կամ թագավորի բնդունելություն: Ժողովրդի այլևայլ դասերի և սեռերի ներկայացուցիչները հասնելով պատշգամբներն ու կտուրները, ծառերի վրա... զգեստավորել է համապատասխան իրական կյանքին...

Նկարչի տեխնիկան բարձր է և յուրատեսակ, գույները նուրբ են...»⁶⁵: Եվ ո՞վ գիտե, Մարգարե նկարիչը չի աշխատել Անի քաղաքի հոյակապ պալատների և տաճարների որմնանկարների վրա:

65 Գ. Հովսեփյան, *նշվ. աշխ.*, էջ 71—74:

A. S. МАТЕВОСЯН

ПАМЯТНИКИ ПИСЬМЕННОСТИ И МИНИАТЮРЫ ГОРОДА АНИ

(Резюме)

Хранящаяся в Матенадаране им. М. Маштоца рукопись под номером 6288, известная как «Ахятское Евангелие», была написана в 1211 г. двумя писцами по заказу монаха Саака из Ани.

Писцом II—X тетрадей был, по-видимому, Вард, а остальной части—Акоп, который не только написал эту часть, но и украсил миниатюрами всю рукопись, начиная с хоранов и заставок и кончая маргиналами и орнаментальными инициалами, которые он, однако, не раскрасил, за исключением заставок. Рукопись была отвезена в Оромосский монастырь к известному переплетчику Аврааму. Однако перед тем, как ее переплести, рукопись с целью иллюстрации, была послана в анийский монастырь Бехенц, настоятелем которого был Ехбайрик, а известным писцом и миниатюристом—Маргаре. Маргаре отделяет начальные хораны, и помещает хораны, нарисованные им самим, на следующих листах рисует «Въезд Христа в Иерусалим» и «Дарственную»,—Христос с заказчиками братьями Сааком и Аракелом. Заменяет первый лист евангелия от Матфея двумя новыми листами, на первом из которых он рисует заставку, на другом пишет текст. Полностью меняет X тетрадь, в которой была заставка евангелия от Марка. Пять из написанных Аконом листов сейчас находятся в начале рукописи в качестве защитных листов. И наконец, он добавляет еще один лист, на котором пишет пропущенный Аконом отрывок. Он также раскрашивает все маргиналы и орнаментальные инициалы.

Рукопись была переплетена переплетчиком Авраамом, затем принесена в дар новой церкви Аруджарического монастыря, которая была построена на средства отца и родственников Саака.

Анийский монастырь Бехенц, принадлежавший Тиграну Оненцу и возглавлявшийся отцом Ехбайриком, в конце XII и в начале XIII вв. был скрипторием, в котором была написана и иллюстрирована также рукопись Матенадарана № 5554 (писец и художник Тирацу). По-видимому, в этом центре иллюстрирована также рукопись № 7635, подаренная в 1249 г. монастырю Оромос.

Монастырь Бехенц является первым из известных нам центров письменности и миниатюры в городе Ани.

A. S. MATHEVOSSIAN

LES RELIQUES DES SCRIPTORIA DE LA VILLE D'ANI

(Résumé)

Le manuscrit no. 6288 du Maténadaran Machtotz, connu sous le nom d'Évangile de Haghpat, a été écrit en 1211 par deux scribes sur la commande du moine Sahak d'Ani.

Le scribe des II^e-X^e cahiers fut probablement Vard, celui du reste, Hacoփ qui a aussi enluminé tout le manuscrit, exécutant les canons de concordance, les vignettes, les ornements marginaux et les majuscules que, cependant, il n'a pas coloriés, sauf les vignettes. Le manuscrit fut ensuite emporté au monastère de Horomos chez le célèbre relieur Abraham, mais avant d'être relié, le manuscrit fut envoyé, pour y être illustré, au monastère Békhentz d'Ani, dont le prieur était Eghbaïrik et où travaillait le célèbre scribe et miniaturiste Margaré. Margaré sépare les canons de concordance du début et les remplace par d'autres qu'il avait exécutés lui-même, dessine sur les pages suivantes «L'Entrée du Christ à Jérusalem», et une miniature représentant le Christ entouré des frères Sahak et Arakel, commanditaires du manuscrit. Il remplace le feuillet initial de l'évangile selon Matthieu par deux nouveaux feuillets, sur l'un desquels il exécute une vignette, sur l'autre il écrit le texte. Il change complètement le X^e cahier, où se trouvait la vignette de l'évangile selon Marc. Cinq des feuillets écrits par Hacoփ ont été utilisés comme feuilles de garde au début du manuscrit. Enfin, Margaré ajoute encore un feuillet où il écrit le fragment oublié par Hacoփ. Il peint également tous les ornements marginaux et les majuscules. Le manuscrit est relié par le relieur Abraham, puis offert en don à la nouvelle église du monastère d'Aroudjarik construite aux frais du père et des parents de Sahak.

A la fin du XII^e et au début du XIII^e siècle, le monastère Békhentz d'Ani, appartenant à Tigrane Honentz et dirigé par le prieur Eghbaïrik, possédait un scriptoria où fut également écrit et enluminé le manuscrit no. 5554 du Maténadaran (scribe et peintre Tiratzou). Selon toute probabilité, c'est ici aussi que fut enluminé le manuscrit no. 7635, offert en don au monastère Horomos en 1249.

Le monastère Békhentz est le premier des scriptoria connus de nous de la ville d'Ani.